



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorcity@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2014 թվականի N 37-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ 29-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասին 14-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Վանաձորի համայնքի ղեկավարի 2014 թվականի հուլիսի 31-ի «Վանաձորի ձմեռային մարզաձևերի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և համայնքի ղեկավարի 2014 թվականի մայիսի 22-ի թիվ 1199-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1677-Ա որոշումը.
2. Հաստատել «Վանաձորի ձմեռային մարզաձևերի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի.
3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ավագանու 2014 թվականի մայիսի 30-ի «Վանաձորի աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը առանձնացման ձևով վերակազմակերպելու, կանոնադրությունը և բաժանիչ հաշվեկշիռը հաստատելու մասին» թիվ 29-Ա որոշումը.
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ(12)

ԴԵՄ(0)

ՁԵՌՆՊԱՀ(0)

Ս.Ղամբարյան

Ս.Աղաբեկյան

Ա.Օհանյան

Ա.Հարությունյան

Կ.Պառավյան

Ա.Մատինյան

Ա.Գրիգորյան

Վ.Դավիթավյան

Դ.Սիմոնյան

Ա.Խաչատրյան

Ա.Այվազյան

Ա.Փելեշյան



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՎԱՆԱԶՈՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ

ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության «Վանաձորի ձմեռային մարզաձևերի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ մարզադպրոց/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող երեխաների և դեռահասների շրջանում մարզումներ իրականացնող մարզական կազմակերպություն է:

1.2 Մարզադպրոցի հիմնադիրն է Վանաձորի համայնքը՝ ի դեմս համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու:

1.3. Մարզադպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4. Մարզադպրոցը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում

- ♦ կանոնադրությամբ ամրագրված իր գործառույթների կատարման
- ♦ մարզումների անցկացման ծրագրերի իրականացման ծավալի և որակի
- ♦ ազգաբնակչության կյանքի և առողջության պահպանման համար:

1.5. Մարզադպրոցը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Մարզադպրոցն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ և դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6 Մարզադպրոցն ունի հայերեն և անգլերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, կարող է ունենալ խորհրդանիշ, այլ անհատականացման միջոցներ:

1.7 Մարզադպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.8 Մարզադպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9 Մարզադպրոցում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.10 Մարզադպրոցը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.11 Մարզադպրոցը գործում է.

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ք. Վանաձոր Զոր.Անդրանիկի փողոց 8բ հասցեում:

2. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Մարզադպրոցի գործունեության հիմնական նպատակը երեխաների, դեռահասների և երիտասարդների շրջանում ձմեռային բոլոր մարզաձևերից պարապմունքների

կազմակերպումն է:

2.2 Մարզադպրոցի խնդիրներն են՝

ա) սպորտային մարզումների շնորհիվ մարզիկների առողջության պահպանումն ու ամրապնդումը

բ) ազգային բանակի համար ֆիզիկապես առողջ և հարմոնիկ զարգացած զինակոչիկների պատրաստումը

գ) համապատասխան մարզաձևից բարձրորակ մարզիկների պատրաստումը քաղաքային և հանրապետական հավաքականներում ընդգրկելու նպատակով:

3. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Մարզադպրոցի գործունեությունը կազմակերպվում է մարզիկների մարզումների, տարբեր սպորտային միջոցառումների և ազգաբնակչության ակտիվ հանգստի կազմակերպման համապատասխան:

3.2 Մարզադպրոցը կահավորվում է համապատասխան գույքով, բժշկական ու կենցաղային անհրաժեշտ սարքավորումներով:

3.3 Մարզադպրոցի աշխատակազմը սահմանված կարգով հաստատում է համայնքի ղեկավարը:

3.4 Մարզադպրոցի աշխատանքային ռեժիմը, մարզումների տևողությունը, մարզական խմբերի համալրումը, գործուղման ծախսերի կարգը որոշվում է ՀՀ սպորտվարչության մեթոդական ցուցումներին համապատասխան, համայնքի ղեկավարի և ավագանու որոշմամբ: Թույլատրվում է մարզադպրոցի կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև մարզիկների ազատ հաճախումը մարզադպրոց:

3.5 Անհրաժեշտության դեպքում մարզադպրոցի աշխատանքային գրաֆիկի և աշխատաժամի տևողության փոփոխությունը կատարվում է համայնքի ղեկավարի թույլտվությամբ:

3.6 Ծնողները իրավասու են ըստ անհրաժեշտության մարզիկին մարզադպրոցից տանելու՝ այդ մասին տեղյակ պահելով մարզիչին:

3.7 Մարզադպրոցի ստեղծումը և նրա գործունեության դադարեցումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8 Մարզադպրոցի անվանումը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հիմնադրի կողմից:

3.9 Մարզիկին մարզադպրոց ընդունելու համար պարտադիր ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- ♦ դիմում / ծնողի կամ փոխարինող անձի /
- ♦ տեղեկանք նրա առողջական վիճակի վերաբերյալ
- ♦ տեղեկանք վարակիչ հիվանդությունների բացակայության վերաբերյալ
- ♦ ծննդյան վկայականի պատճենը
- ♦ 2 լուսանկար:

3.10 Մարզիկին մարզադպրոցից ազատում է տնօրենը.

- ♦ բժշկական եզրակացության հիման վրա
- ♦ առանց հարգելի պատճառի մեկ ամսից ավելի բացակայության դեպքում:

3.11 Մարզադպրոցի խմբերի խտությունը սահմանվում է համաձայն գործող պետական չափորոշիչների:

3.12 Մարզադպրոցի մարզիկների բժշկական սպասարկումն իրականացվում է մարզադպրոցի հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք տնօրինության հետ պատասխանատվություն են կրում մարզիկների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման համար:

4. ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1 Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացը կազմակերպվում է սույն կանոնադրությանը համապատասխան և կարգավորվում է ուսումնական պլանով, ուսումնական ծրագրով, ֆիզկուլտուրային առողջարարական և մարզական միջոցառումների ծրագրով, յուրաքանչյուր ուսումնական խմբի ժամանակացուցակով և դասացուցակով:

4.2 Մարզիկների ընդունելության ժամանակ տնօրինությունը պարտավոր է ծնողներին / օրինական ներկայացուցիչներին / ծանոթացնել սույն կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մարզադպրոցի գործունեությունը:

4.3 Ծնողների և մարզադպրոցի հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

4.4 Մարզադպրոցում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական – մանկավարժական որակավորում:

4.5 Մարզադպրոցի աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենսդրության համապատասխան, մարզադպրոցի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՄԱՐՁԱԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 Մարզադպրոցի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ մարզադպրոցի տնօրենը / այսուհետ տնօրեն /:

5.2 Մարզադպրոցի հիմնադիրն ունի մարզադպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծում տալու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.3. Մարզադպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- ♦ մարզադպրոցի հիմնադրումը
- ♦ մարզադպրոցի գործունեության առարկայի նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը
- ♦ մարզադպրոցի սեփականության իրավունքով հանձնվող և կամ ամրացվող՝ համայնքին

պատկանող գույքի կազմի հաստատումը

- ♦ մարզադպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը
- ♦ մարզադպրոցի կառավարման կարգի հաստատումը
- ♦ մարզադպրոցի վերակազմավորումը և լուծարումը
- ♦ մարզադպրոցի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշիռի հաստատումը
- ♦ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված և այլ հարցերի լուծումը:

5.4 Համայնքի ղեկավարն իրականացնում է մարզադպրոցի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.5 Համայնքի ղեկավարը՝

- ♦ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է մարզադպրոցի կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
- ♦ վերահսկողություն է իրականացնում մարզադպրոցի գործունեության նկատմամբ
- ♦ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մարզադպրոցի տնօրենի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները
- ♦ լսում է մարզադպրոցի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները
- ♦ վերահսկողություն է իրականացնում մարզադպրոցին ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ
- ♦ համայնքի ավագանու որոշմամբ մարզադպրոցի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության համար
- ♦ հաստատում է մարզադպրոցի տարեկան հաշվետվություններ և տարեկան հաշվեկշիռը, իրականացնում է մարզադպրոցի կանոնադրությամբ չնախատեսված այլ գործառնություններ.
- ♦ համայնքի ավագանու համաձայնությամբ նշանակում է մարզադպրոցի տնօրենին:

5.6 Տնօրենն իրականացնում է մարզադպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է մարզադպրոցի գործունեությունն ու կրում պատասխանատվություն՝ օրենքի, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.7 Տնօրենը

- ♦ առանց լիազորագրի հանդես է գալիս մարզադպրոցի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ

- ♦ սահմանում է մարզադպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները
- ♦ ՀՀ օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է մարզադպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները
- ♦ տալիս է մարզադպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր
- ♦ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է մարզադպրոցի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր
- ♦ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ
- ♦ կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև
- ♦ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմանում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը
- ♦ վերահսկողություն է իրականացնում մարզադպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ
- ♦ ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը
- ♦ կազմում է մարզադպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակը և ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը
- ♦ իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և մարզադպրոցի կառավարման մյուս մարմինների չվերապահված լիազորություններ:

5.8 Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի որոշմամբ /կարգադրությամբ/ տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնում է այլ անձ:

5.9 Փոխտնօրենը/ տնօրենի ուսումնական գծով տեղակալը/ , մեթոդիստը և հրահանգիչը՝

- ♦ իրականացնում են ուսումնասիրական աշխատանքի մեթոդական ղեկավարումը
- ♦ ապահովում և վերահսկում են մարզումների և միջոցառումների, մրցաշարերի անցկացումը

5.10 Տնտեսական մասի վարիչը

- ♦ կազմակերպում է մարզադպրոցի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ գույքի, սարքավորումների ստացումն ու պահպանումը
- ♦ հետևում է մարզադպրոցի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու
- ♦ պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՄԱՐԶԱԴՊՐՈՅԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 6.1 Մարզադպրոցի սեփականությունը ձևավորվում է մարզադպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև մարզադպրոցի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
- 6.2 Մարզադպրոցն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ / իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու իրեն ամրացված գույքը:
- 6.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով մարզադպրոցին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ լուծարումից հետո մնացած գույքի:
- 6.4 Մարզադպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է մարզադպրոցը:
- 6.5 Մարզադպրոցի սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:
- 6.6 Հիմնադիրն իրավունք ունի վերցնել իր կողմից մարզադպրոցին ամրացված գույքը:
- 6.7 Մարզադպրոցը իրավունք չունի՝
- ♦ ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու,
 - ♦ ամրացված գույքի վարձակալության ժամկետը սահմանել մեկ տարվանից ավելի, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
- 6.8 Մարզադպրոցն իրավունք ունի
- ♦ իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ մարզադպրոցի կանոնադրությամբ:
- 6.9 Ամրացված գույքի օգտագործման արդյունքում մարզադպրոցի ստացած եկամուտները մարզադպրոցի սեփականությունն են: Մարզադպրոցի ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարեկալումները հիմնադրի սեփականությունն են: Մարզադպրոցի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
- 6.10 Մարզադպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
- 6.11 Մարզադպրոցը ֆինանսավորում է հիմնադիրը: Մարզադպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
- 6.12 Մարզադպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
- ♦ հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները
 - ♦ բարեգործական նպատակային ներդրումները և հովանավորությունը.

- ♦ լրացուցիչ վճարովի խմբերի վճարները
- ♦ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները
- ♦ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և մարզադպրոցի գործունեությունից ստացված միջոցները
- ♦ Մարզադպրոցի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

7. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1 Մարզադպրոցը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorcitey@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2014 թվականի N 38-Ա

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի հանձնարարությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածներով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Վանաձոր քաղաքի բնակիչ համարվող Հայրենական Մեծ պատերազմի թվով 22 վետերանների, համաձայն կից ներկայացված հավելվածի, սեփականության իրավունքով նրանց պատկանող անշարժ գույքի և փոխադրամիջոցների մասով ազատել 2014 թվականի գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորություններից:

2. Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարին՝ նշված 22 սեփականատերերի մասով գույքահարկի և հողի հարկի հաշվառման բազաներում կատարել հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

ԿՈՂՄ(12)

ԴԵՄ(0)

ՁԵՌՆՊԱՀ(0)

Ս.Ղամբարյան

Ս.Աղաբեկյան

Ա.Օհանյան

Ա.Հարությունյան

Կ.Պառավյան

Ա.Մատինյան

Ա.Գրիգորյան

Վ.Դավիթավյան

Դ.Սիմոնյան

Ա.Խաչատրյան

Ա.Այվազյան

Ա.Փելեշյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorcitey@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2014 թվականի N 39-Ա

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ՀՈՂԱՅԻՆ

ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Համաձայնություն տալ 2014թ. հուլիսի 01-ի դրությամբ կազմված Վանաձորի համայնքի հողային հաշվեկշիռին՝ համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ(12)

ԴԵՄ(0)

ՁԵՌՆՊԱՀ(0)

Ա.Ղամբարյան

Ս.Աղաբեկյան

Ա.Օհանյան

Ա.Հարությունյան

Կ.Պառավյան

Ա.Աատինյան

Ա.Գրիգորյան

Վ.Դավիթավյան

Դ.Սիմոնյան

Ա.Խաչատրյան

Ա.Այվազյան

Ա.Փելեշյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների, առ 01.07.2014թ.)

Սարգ
Համայնք

ԼՈՒՐՈՒ	0
Վանասմոր (ապագատեսք)	414

(հեկտարներով)

NN ը/կ	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը, գործառական նշանակությունը	Ճածկափրը	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ										
					ՀՀ բաղադրացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական				
							Ընդամենը (5+6+7)	տրված ամիստույց օգտագործման	վարձակալության բ. տրված	օգտագործման և վարձակալության բ. չտրված	Ընդամենը (9+10+11)	տրված ամիստույց օգտագործման	վարձակալության բ. տրված	օգտագործման և վարձակալության բ. չտրված	
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող													
1.2		բազմ տնկ.													
1.2.1		այդ թվում՝ պտղ													
1.2.2		խաղողի այգի													
1.2.3		այլ բազմամյա													
1.3	խոտհարք														
1.4	արոտ														
1.5	այլ հողատեսքեր			3.26			3.26			3.26					
1	Ընդամենը			3.26			3.26			3.26					
2.1	2. Բնակավայրերի	բնակելի կառուց այդ թվում՝		1072.15	570.57		501.58	0.08	0.64	500.85					
2.1.1		այգեզ-ն (ամառ-ն		563.30	563.30										
2.1.2		այգեզ-ն (ամառ-ն													
2.2		հասարակ		177.65	21.48	5.67	76.43	0.88	5.70	69.85	74.08	40.39	0.15	33.54	
2.3		խառը կառուցապ րնդի օգտագործ		77.78	0.05		77.73			77.73					
2.4		այլ հողեր		246.40			246.40		0.06	246.34					
2.5		այլ հողեր		333.08	2.29		330.80		0.00	330.79					
2		Ընդամենը		1907.06	594.39	5.67	1232.92	0.96	6.40	1225.56	74.08	40.39	0.15	33.54	
3.1	3. Արդյունաբ ր.	արդյունաբ		294.41	4.60	79.12	210.69		5.91	204.78					
3.2		գյուղտն, արտադ		10.48	0.02		10.46			10.46					
3.3		պահեստարաննե		1.10			1.10			1.10					
3.4		ընդերք օգտագոր													
3	Ընդամենը		305.99	4.62	79.12	222.25		5.91	216.34						
4.1	4. Ենթակառուց այն. տրամադրոտ	էներգետիկայի		6.46			0.16		0.16	6.30				6.30	
4.2		կապի		1.53			0.59		0.59	0.94				0.94	
4.3		տրանսպորտի		53.29			5.08		5.08	48.21				48.21	
4.4		կոմուն ենթակառ		17.15			17.15		1.61	15.54					
4	Ընդամենը		78.43			22.98		1.61	21.37	55.45				55.45	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպան		9.74						9.74		1.94	7.80		
5.1.1		այդ թվում՝ արգելց													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկ		9.74							9.74		1.94	7.80	
5.2		առողջարարակ		7.38			7.38			7.38					
5.3		հանգստի		30.46	0.06		23.37			23.37	7.03	7.03			
5.4	պատմ և մշակութ		61.60			36.29			36.29	25.31			25.31		
5	Ընդամենը		109.18	0.06		67.04			67.04	42.08	7.03	1.94	33.11		
6	Ընդամենը		14.38							14.38				14.38	
7.1	7. Մետաղային	անտառ		0.21						0.21				0.21	
7.2		բփուտ		121.65						121.65				121.65	
7.3		վարելահող													
7.4		խոտհարք													
7.5		արոտ													
7.6		այլ հողեր													
7		Ընդամենը		121.86							121.86				121.86
8.1	8. Ջրային	գետեր		53.54						53.54				53.54	
8.2		ջրամբարներ													
8.3		լճեր		5.54			5.54			5.54					
8.4		ջրանցքներ		0.09			0.09			0.09					
8.5		հղտ. և ջր. այլ օբ.													
8	Ընդամենը		59.17			5.63			5.63	53.54				53.54	
9.1	9. Պահուստա յին	աղուտներ													
9.2		ավազուտներ													
9.3		ճահիճներ													
9.4		այլ													
9.5		Ընդամենը													
9	Ընդամենը														
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՒՐԵՐ				2599.33	599.07	84.79	1554.08	0.96	13.91	1539.20	361.65	47.42	2.20	33.11	

Համայնքի ղեկավար

ԼՈՒՐՈՒ ղեկավար

(ստորագրություն)

(ստորագրություն)



[Handwritten signature]

